

ԳԻՏԱԺՈՂՈՎ ԼԵՓՄԻՈՒՄԻ ՏԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Հայաստանի մեծ գործիչ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի Պոստդամում գտնվող առանձնատունը, որը մի քանի տարի է, ինչ գերմանական կառավարության միջոցներով նորոգվել է հատկացվել է հայ-գերմանական գիտամշակութային միջոցառումների իրականացման նպատակին, արդեն դարձել է հայագիտության մի ուրույն և ծանրակշիռ կենտրոն:

Հատկապես 2011թ., երբ Լեփսիուսի տան տնօրեն ընտրվեց «Նեմեսիսի օպերացիան» հայտնի գրքի հեղինակ Ռուֆ Հոսֆելդը, այդ կենտրոնն աչքի է ընկնում ակտիվ և արդյունավետ գործունեությամբ:

Ռ.Հոսֆելդը և տան վարչությունը իրենց գործունեության ճանապարհին առկա կյութական արգելքները հաղթահարելու և, մյուս կողմից, կատարվող աշխատանքներին ու դրանց արդյունքներին առավելագույն իրապարակայնություն հաղորդելու համար դրանք, որպես կանոն, իրականացնում են Գերմանիայում հայտնի գիտական և մշակութային կենտրոնների սերտ համագործակցությամբ:


Դրա վառ արգասիքն էր «Յոհաննես Լեփսիուս. միակ գերմանացի բացառությունը» թեմայով 2012թ. հոկտեմբերին տեղի ունեցած միջազգային գիտաժողովը, որը կազմակերպվեց Պոստդամի համալսարանի գործակցությամբ, և որին գերմանացի զեկուցողների հետ մեկտեղ մասնակցում էին նաև հայագետներ Հայաստանից, Շվեյցարիայից և ԱՄՆ-ից:

Սույն թվականի մարտի 10-12-ը Լեփսիուսի տունը կազմակերպեց մի նոր միջազգային գիտաժողով՝ նվիրված Ֆրանց Վերֆելի հիշագրականին: Այն ուներ «Տեղասպանություն և գրականություն. Ֆրանց Վերֆելը հայկական-հրեական-թուրքական-գերմանական հեռապատկերում» խորագիրը և տեղի ունեցավ Պոստդամի՝ Մովսես Մենդելսոնի անվան կենտրոնի համագործակցությամբ:

Գիտաժողովն ուներ ներկայացուցչական պատկառելի կազմ և բնութագրվում էր զեկուցումների

թեմատիկ բազմազանությամբ: Մարտին Գորհոլտի, պրոֆ. Յուլիուս Շյոպսի և դոկտոր Ռուֆ Հոսֆելդի ներածական ելույթներից հետո գիտաժողովը շարունակվեց Փարիզից ժամանած Պետեր Ստեֆան Յունգլի «Աշխարհի մի բարեկամ աշխարհների միջև» զեկուցմամբ:

Մեծ հետաքրքրությամբ լսվեցին նաև պրոֆ. Հանս Դիտեր Ֆիներմանի (Բեռլին) «Ֆրանց Վերֆելը և Պրահայի հասարակական շրջանները», դոկտոր Օլգա Զուլլերի (Վիեննա) «Հրեականությունը և քրիստոնեությունը Ֆրանց Վերֆելի կյանքում և գործում», Ռոյ Կևեկեի (Պոստդամ) «Ֆրանց Վերֆել՝ բարոյափոխության պրոֆիլի փորձ», պրոֆ. Անդրեաս Մայերի (Վուպերթալ) «Ֆրանց Վերֆելի արեւելյան ճանապարհորդությունը և հայաստանյան թեմայի հայտնաբերումը», դոկտոր Ռուֆ Հոսֆելդի (Բեռլին-Պոստդամ) «Մուսա լեռան պատմական իրադարձու-



թյունները Հայոց ցեղասպանության համատեքստում», պրոֆ. Մարտին Թամկեի (Գյոթինգեն) «Ֆիկցիան և իրականությունը. Վերֆելը և Վեգները», դոկտոր Վերներ Տրեսի (Պոստդամ-Բեռլին) «Ֆրանց Վերֆել. հրկիզված գրողը», պրոֆ. Ռուբինա Փիրումովայի (Լոս Անջելես) «Վերֆելի հայկական ընկալումը և իրավունքի ու սիրո՝ նրա անգնահատելի կերպավորումը» և դոկտոր Ուլրիկե Շնայդերի (Պոստդամ) «Հրեական կրոնական և մշակութային հայեցակարգերը Վերֆելի գործում» զեկուցումները:

Ուրախությամբ հարկ է նշել, որ գիտաժողովը, որն անցավ մտքերի ակտիվ փոխանակության և կառուցողական քննարկումների մթնոլորտում, լայնորեն լուսաբանվեց նաև գերմանական զանգվածային լրատվամիջոցներում:

Այն նոր կարևոր քայլ էր ինչպես Վերֆելի հիշատակը վառ պահելու առումով, այնպես էլ մուսալեռցիների և Հայոց ցեղասպանության պատմությունը եվրոպական հասարակական գիտակցության մեջ ամրակայելու ճանապարհին:

ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՄԻ